ԹԵՄԱ 6

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի ամփոփում

Լրացուցիչ խնդիրներ և առաջադրանքներ

1. Որո՞նք են բնակչության ցածր աճի պատճառները հին ժամանակներում և զարգացած երկրներում նոր ժամանակներում:
2. Ի՞նչ է ժողովրդագրական հեղափոխությունը: Համառոտ բնութագրե՛ք ժողովրդագրական հեղափոխությունները:
3. Բացատրե՛ք բնակչության վերարտադրության ազդեցությունը տարիքային կազմի վրա:
4. Ներկայացրե՛ք աշխարհի բնակչության շարժընթացի բնորոշ գծերը պատմական տարբեր ժամանակահատվածներում: Բացատրե՛ք բնակչության թվի շարժի աշխարհագրական առանձնահատկությունները:
5. Համադասարանցիներով քննարկե՛ք՝ իրականություն կդառնա՞ արդյոք աշխարհի բնակչությանը միայն էկոլոգիապես մաքուր սննդամթերքով ապահովելու գաղափարն ու ցանկությունը:
6. Որո՞նք են բնակչության կազմը բնութագրող հիմնական ցուցանիշները:
7. Բացատրե՛ք բնակչության վերարտադրության տիպերի ազդեցությունը տարիքային կազմի վրա:
8. Բնութագրե՛ք և համեմատե՛ք «տնտեսապես ակտիվ բնակչություն» և «աշխատանքային ռեսուրսներ» հասկացությունները:
9. Ի՞նչ գործոններով է պայմանավորված կյանքի միջին տևողությունը: Ինչպե՞ս է այն ազդում աշխատանքային ռեսուրսների քանակի վրա: Նշե՛ք կյանքի միջին տևողության աշխարհագրական տարբերությունների պատճառները:
10. Բնակչության կրթական մակարդակն ինչպե՞ս է ազդում աշխատանքային ռեսուրսների որակի վրա:
11. Որո՞նք են բնակչության տեղաբաշխման վրա ազդող հիմնական գործոնները:
12. Վերլուծե՛ք բնակչության խտության ցուցանիշներն ամբողջ աշխարհի, խոշոր տարածաշրջանների և առանձին երկրների կտրվածքով:
13. Ինչո՞վ է պայմանավորված բնակչության տարածական շարժունությունը, որոնք են նրա հիմնական տեսակները:
14. Բացատրե՛ք արտագաղթի և ներգաղթի աշխարհագրական հետևանքները:
15. Որո՞նք են գաղթերի գլխավոր պատճառները և ինչ դրսևորումներ ունեն ՀՀ-ում:

16. Վերլուծեք աշխատուժի միջազգային միգրացիայի գլխավոր ուղղությունները և հետևանքները:
17. Որո՞նք են գյուղական տարաբնակեցման ձևերը և դրանց տարածման շրջանները:
18. Ի՞նչ է ուրբանացումը, ի՞նչ գործոնների շնորհիվ է այն բուռն զարգացում ապրել:
19. Որո՞նք են ուրբանացման վրա ազդող գլխավոր գործոնները:
20. Թվարկեք քաղաքների գործառույթները: Նշեք օրինակներ:
21. Ներկայացրեք քաղաքների խմբավորումն ըստ մարդաշատության:
22. Ի՞նչ գործառույթներ են իրականացնում ժամանակակից խոշոր քաղաքները:
23. Քաղաքների զարգացման վրա ինչպես է ազդում տնտեսաաշխարհագրական դիրքը:
24. Թվարկեք և բնութագրեք քաղաքների տարածաշրջանային տիպերը: